

# ԱՆՑԵԱԼԻՑ ՄԻ ԲԵՎՈՐ

ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆԻ

## I

Չեզնիսց օվ է գիշերել շուրսը, ջինջ օդի, յուլիսեան պարզ երկնքի տակ: Ատում են՝ բանաստեղծութիւնը շարարկաբանութիւն է. ճշմարիտ, այդպէս ասողները իսկի չեն գիշերել շուրսը, ջինջ օդի, յուլիսեան պարզ երկնքի տակ. եթէ նրանք գիշերած լինէին շուրսը, ջինջ օդի, կենսաբեր զեփիւռի, շարան-շարան Գողգոթիւն ասորդերի, նազ ու թաղով սահող լուսնի, անմռունչ սար ու ձորերի, քար ու քոյրերի, բաշ ու բաշայի Դիւթանքի տակ, այն ժամանակ կ'հասկանային, թէ ինչ է բանաստեղծութիւնը: Ս', յուլիսեան գիշեր, խնկիլի, անձառելի գիշեր. հեռու գիւղից հնչող աքաղաղի ձայնն անգամ թովչանք է աղղում, ճպուռի ճիւ-ճիւրը, գորտի կռողն անգամ խորհրդաւորութիւն են տալիս յուլիսեան գիշերին: Պառկելիս փափուկ անկողնից մէջ, քունդ չէ տանում, բնութիւնն օրօրում է քեզ, բայց հանդարտ, մեղմիկ, քեզ չէ յոդնեցնում, չէ շշմեցնում: Կէսգիշեր է. լուռ, ձէն ու ձուն չ'կայ, կարծես հրամայած է ամենքին սուս կենալ, կարծես ամեն ինչ մի բանի է ստատում... Յանկարծ հեռւից՝ «հէհէէ, հէհէէ, հէյ...» լսւում է օդում մի զիլ ու ձգող հնչիւն, արձագանք տալիս լեռ ու խորերում, հեռանում, անցնում, կորչում, մեռնում... այդ այգեպանի, կամ անխոնջ ջրաղացպանի ձայնն է, նա կանչում է իր ընկերոջը: Կամ գիշերային այդ խորհրդաւոր լռութեան ժամին ջանկարծ հասնում են ականջից տխուր, մեղամաղձոր բայաթիի թափառող խաչերը, շոյում են լսելիքդ, սիրտդ ճմլւում է, հոգիդ

լայնանում, մեծանում, թւում է թէ երկնքիցն է գալիս այդ եղեմական գեղգեղանքը. լցում ես մի քաղցր, շուրեկան ահով, կուչ գալով՝ գլուխդ ծածկում ես վերմակիդ փակ, ցօշն իջնում է վրադ... Է՛յ, ձեզնից ո՞վ է գիշերել շուրսը, ջինջ օդի, յուլիսեան պարզ երկնքի փակ... Երկնք երկնք քունս չէր փանում:

Թեւ յենած բարձիս, հայեացքս յառած հեռուն լուսնին փակ սևին փուղ մի կէտի, թաղել էի երազանքի մէջ: Ու Սիրանոյշն էր իհարկէ աչքերիս դէմը, իր ձայն ու կատակները հնչում էին դեռ ականջիս. իսկ կրծքիս փակ մի երջանիկ ու անդորր թեթևութիւն...

Ել ուրիշ ոչինչ չեմ ջիշում: Երբ յանկարծ շարժւեցի ու աչքերս բացի՝ առաւօտ էր. արեածագ:

Վաղ էր դեռ. արագ հագնւեցի ու սկսայ անհամբեր անցուդարձ անել մեր այգում, կանաչի միջով, չ՛մոռացայ անօթի վորովքիչ գելաս ու հոն ուտելու, մինչև որ մեր գործարանում բանոյ աղջիկները հաւաքւեցին, գործարանը կենդանացաւ:

Վերևի այս աղմուկը զարթեցրած կ'լինի նրանց, գնամ, մտածեցի ես և քայլերս ուղղեցի գործարանի կողմը: Ճիշտ որ մեր հիւրերը ու ծնողներս արդէն ժողովւել էին այգու մի անկիւնը. ծառերի փակ, սեղանի վրայ բազմած էր ինքնաեռը, և նրա կողքին շարւել էին կաթի ու սերի ամանները:

— Ա՛յ, պարոն Արշաւիրը, բացականչեց Սիրանոյշը ձեռը մեկնելով դէպի ինձ:

— Արշաւիր, ո՞ւր էիր կորել, կարծում էինք գայլն է փարեջքեզ, ժպտալով կատակեց Սոկրատը՝ օրիորդի եղբայրը:

Ես թեթև բարևեցի բոլորին և նստեցի:

— Գիտէ՞ք ինչ կայ, ասաց օրիորդը, աւելի լաւ չի՞ լինիլ, եթէ զնանք գետի ափին թէյ խմենք. այստեղից մի քանի քայլ է ընդամէնը:

— Այո՛, այո՛, շատ լաւ կ'լինի, ձայն տւի ես:

— Զէ, ինչ կարիք կայ, թէյից յետոյ մարդ կ'ուշարկենք գիւղը ձկնորսի ետևից, ուռկան վերցնի գայ, և կ'զնանք գետը ձուկ որսալու, առարկեց Սիրանոյշի հայրը:

Ես անմիջապէս դիմեցի գործարանը, ծառաներից մէկին ու-

շարկեցի ձկնորս Խաչատրի ետևից. և երբ եկաւ, բոլորս միասին գնացինք դերի ափը:

Մինչ մեր հայրերը առևտրի մասին էին խօսում, թէ ինչպէս էր բոժոժի գինը այդ տարին, մետաքսէ թելի փութը քանիսով է գնում Մարսէլ, կամ այս ինչ վաճառականն ինչպէս սնանկացաւ մետաքսագործութիւնից, այն ինչն ինչպէս հարստացաւ նոցն մետաքսագործութեամբ, ձկնորս Խաչատրուրը հանեց տրեխներն ու գուլպաները, վարտիկը վեր ծալեց, աքաճներով կծեց ուռկանի մի ծայրը, միւս ծայրը ձախ ձեռն առաւ, թոկը աջ ձեռը, ուռկանը չետ փարաւ և ապա աքաճներից ու ձախ ձեռքից բաց թողնելով շարկեց դերի մէջ, աջ ձեռքում պահած ունենալով թոկը, չետոյ հանդարտութեամբ ուռկանը քաշեց, մինչև կապարի ծանր գնդակները չափակով քարշ գալով՝ կիտեցին իրար վրայ, և ապա ուռկանի ճորից բռնելով՝ արագութեամբ շուրս քաշեց ցամաք և բաց արաւ օրիորդի «բախտին»։ Հինգ հար մեծ-մեծ զիրաւ ձկներ թըրպարտով ընկան դերին։

Օրիորդը հրճեց իր այդ բախտից, և մենք շարունակեցինք դերի հունով վերև բարձրանալ. նա չէր հեռանում ինձանից, անչափ խօսում էինք, անչափ ծիծաղում։ Օրիորդը շառագունել էր շողից և բաւականութիւնից, իսկ ես պայտասսի էի փոքրիկ երեխայի նման վազելու, ցատկելու, գրկելու, երեխայի պէս շարութիւն անելու, երեխայի պէս լալու, ծիծաղելու։ Իզուր չէի ենթադրել ախր, որ Սիրանոցը բանաստեղծականը սիրելիս լինելով, պէտք է որ ինձ էլ սիրի և զգում էի, որ սիրում էր։

Ու գնում էինք միասին թթենիների փակով աշտուժ ու երջանիկ։ Գնում էինք...

— Հէհէ, յանկարծ լսեցինք ծառայի ձայնը և չետ նայելով պեսանք, որ նա ձկան բեռը ցած է Դրել, զլխարկը ձախ ձեռն առել և մեզ է կանչում նրանով։ Մենք չետ Դարձանք։ Մօտ երկու ժամուայ ընթացքում Խաչատրուրը երկու փութից աւելի ձուկ էր բռնել մի վերտից ոչ աւել փորածութեան վրայ և մտադիր էր էլ առաջ դնալու, եթէ միայն ծառան չգանգաւորէր բեռի ծանրութիւնից։

—Բաւական է էլի, այնքան ձուկ մի շաբաթ չես ուտիլ, բայիմ մէջքն էլ խեղճ չէ, կուտուրում է:

Մենք շարձանք մեր ծնողների մօտ: Մտածանքից մէկը մորթել էր գառը, ծառի բունից կախ արել ու մաշկում էր: Միւսը խարոյկներ էր կազմել, երրորդ տեղը խորովածի համար քարեր էին քարսում: Մեր ծնողները խօսում էին, երկու տղամարդ մի տեղ, երկու կին մի տեղ, երեխաները թամբի էին տալիս, մէկը միւսին խփում էր ու փախչում, իսկ հարւած ստացողը վազում էր ջերմից, և եթէ բռնում էր մինչև մի ուրիշից հարւած արանալը, բռնուղն էր թամբ քանդում: Իսկ վճիտ գեյտն էլ մէն-մէնակ վշտում էր հն, վշտում՝ արևի արծաթէ աչք ծակող պսակն իր մէջ առած...

Սարանոյշն ու քոյրս՝ թե թե ի շուրտով առանձնացան իրանց խօսք ու զրոյցով: Մնում էր, որ ես բաւականանայի Սոկրատով. չէ որ նա էլ իմ ընկերն էր. ինչ արած:

Սակրատն սկսեց պատմել, թէ ինչպէս ուշալ Դպրոցն աւարտելուց չէր ուղում էր բարձրագոյն Դպրոց մտնել, բայց հիւանդացաւ, առողջանալուց չեպոյ այլ ևս ուշ էր, ուստի սկսեց հօրն օգնել, մինչև որ կ'գայ նոր ուսանողական տարին, կ'գնայ բախտը փորձելու մայրաքաղաքների ձեմարաններում. բայց հասաւ հետեւալ ուսանողական տարին, և նա չ'գնաց, վճռեց բաւականանալ ունեցած պաշարով և հօրն օգնել, մանաւանդ որ հիւանդոտ էր: Նա ուսումնասիրում էր շերամագահութիւնը և մրտախոր էր այնպէս անել, որ իրանց գործարանների բոժոժն ինքը մատակարարէ. արդէն փորձեր էր արել, և աջողում էր:

Ես էլ պատմեցի ձեմարանական կեանքից, ու զիւղում անցկացրած օրերիս մասին:

Ես Պետերբուրգի լեռնային ձեմարանի առաջին կուրսից փոխադրւել էի երկրորդ, և եկել էի ամառը ծնողացս մօտ հանգրտանալու:

Եւ իսկ որ հանգստանում էի:

Մինչ այս մինչ այն, ձուկը պարտաստ էր, ծառերի շաքում փռած սփռոցի շուրջը շարեցինք այն կարգով, ինչ կարգով որ բաժանուած խօսում էինք—հայրերս իրար մօտ, մայրերն իրար կողքի, երեխաները նրանց երկու կողմից, քոյրս ու Սիրանոյշն իրար

մօտ, ես ու Սոկրատն էլ մի փեղ: Բայց և այնպէս Սիրանոյշը միւս կողմն էր. թէև սկզբից ես մինչև անգամ մի ծանրութիւն զգացի այդ հանգամանքից, թէև ինձ թւում էր, թէ բոլորը մեզ են նայում, բոլորն էլ գիտեն մեր գաղտնիքը, բայց վերջն անցաւ ամեն բան, և սկսեցինք հանաքներ անել, անմեղ, պարզ հանաքներ: Ճաշը շատ վառ էր անցնում, խօսակցութիւնը շարունակւում էր: Գինին էլ մի կողմից էր գլուխներս փաքացնում. բայց քանի խմում էինք, այնքան ինձ զսպում էի, աւելի էի մտածում, որ մի անխոհեմ վարմունքով կամ խօսքով կարող եմ ոչնչացնել Սիրանոյշի վրայ թողած փպաւորութիւնս, ուստի ինձ աւելի լուրջ էի պահում, աւելի քիչ էի խօսում. այնպէս որ ճաշը վերջանալուց ինձ հաշիւ փալով և Սիրանոյշին նայելով՝ փեսայ, որ ինձ օրինակելի եմ պահած և սփացած արդիւնքս սպասածից շատ աւելի էր. և մէջս շատ ուրախացայ:

## II

Յաջորդ առաւօտը Վաղաւորի կիրակին էր, ու մենք գնալու էինք մեր մօտակայ յայտնի ուխտափեղին. արդէն Սիրանոյշենք Դրա համար էին քաղաքից եկել: Դեռ գիշերէր, ժամը երեքը, գործարանից լսում էր այն աղմուկը, որ փրել էր գիւղում. գիւղը Դարտակում էր: Ծուրով աղմուկը լսելի եղաւ գործարանի մօտով անցնող ճանապարհի վրայ: Գիւղացիք, մեծ ու փոքր, շտապում էին ուխտաղին. արևի փայլին չ'ենթարկւելու համար էին շուտ Դուրս եկել: Այդ փօնը ամենանշանաւորն է իմ հայրենիքում, նշանաւոր է նոյն իսկ Չարկից, Ծնունդից Այդ օրը գիւղացու միակ ուրախութեան, քէֆի օրն է, փունը լի է, հոգս չունի: Այդ օրը նրա աղօթքի օրն է. գիւղացին այդ օրն է ուխտ կնքում, այդ օրն իր ցաւերի ու հոգսերի մասին հաշիւ ուղարկում Բարձրեալին՝ սուրբի միջոցով: «Ձու հն չուն անելով երեխաներով բեռնած էշերին, ջորիներին բզելով, ամէն մէկն աշխատում էր ինքն առաջինը հասնել սուրբին, առաջինը ծունկ խոնարհել նրա մատուռի մաշած քարերի վրայ, առաջինը լսեցնել Աստուծուն իր աղերսանքը, քանի որ սուրբի գլուխը չի խառնւել անթիւ աղաչանքներ լսելուց:

Առաւօտեան ժամը ութին մենք էլ ուղևորեցինք Դէպի լեռները, ուր դպնւում էր ուխտափեղին: Չ'նաեած մեր ուշ ճանա-

պարհւելուն՝ վերջին հասնողներից չէինք, մեր ետեւը մեծ ժողովուրդ թողինք:

Չեմ ուզում ձեզ ձանրացնել երկնարիպ լեռների, նրանց լանջերին փռւած խնկաբոց ծաղիկների, լեռնային կենսաբեր օդի ու ջրի նկարագրութեամբ, այդ ամենը պէտք է տեսնել միայն և ոչ թէ լսել: Հայաստանն առար է այդպիսի սքանչելի վայրերով, ահա թէ ինչու հրկիզեալ Պաղեստինի բնակիչները գրախոր են անւանել մեր աշխարհը: Գրախոր որ գրախոր:

Չառիվերի ու նեղ կիրճերի միջով, ուր խռնւած է մի հոծ բաղմուտիւն, մարդկան մի ահագին զանգւած, գլուխների մի ծով, հազիւ էինք կարողանում ճանապարհ բանալ մեր ձիերի և մեզ համար: Տղամարդիկս իջել էինք ձիերից, և իմ ձիիս կապը ծառան բռնած՝ առաջ էր փանում: Յանկարծ աղմուկն աւելի սաստկացաւ, գոռում գոչում էին այս ու այն կողմից. նայեցինք շէպի վեր. ժայռի մի ահագին բեկոր սարսափ փարածելով շուջը՝ թաւալալոր թռչում էր վերեւից ուղիղ մեզ վրայ... Մի կողմը բարձր ժայռ էր, միւս կողմն աւհելի վիհ, առաջ գնալ չէր կարելի, յետո՛ւ գառնալ չէին թողնում: Թողովուրդն աւելի և աւելի խռնեց, իրարանցումն աւելի մեծացաւ, մի գլուղացի ապուակ հասցրեց Սիրանոյշի... ձիու գնչին, ձին ծառս կշաւ, կանգնեց ետեւի ունների վրայ, Սիրանոյշը չկարողացաւ իրան պահել և... պիտի գլորէր անդունդի խորքը, եթէ... եթէ ես օգնութեան չհասնէի: Եւրեակայեցէք այն վախը, այն սարսափը, որ զբաց Սիրանոյշը. նա գեռ չէր հաւսում, թէ ազատւած է, նրան թւում էր, թէ հիմա կ'գլորէր ժայռից շէպի ցած և յետո՛ւ յետ էր քաշում: Նա աւելի սարսափեց, երբ տեսաւ, որ կանգնած է անդունդի առաջ, սուր ժայռի ծայրին:

Անցաւ մի րոպէ, և նրա շէպին վախից առաջացած դունափութեանը խառնեց երախտագիտութեան զգացմունքի արդասպանութիւնը. Սիրանոյշը մեղմիկ վերցրեց ձեռս, համբուրեց և սեղմեց կրծքին...

Մինչ մայրը հեռուից լսելով աղջկայ հետ սարահաճ փորձանքը ճիւղ ամբոխը, անցաւ հասաւ մեզ:

—Այդ ի՞նչ պատահեց, Սիրանոյշ. վնչ իմ աչքերս կուրանան, ասաց նա, ես ինչնու քեզ աչքից թողի:

Քարը ոսրոսպալով՝ ծռել էր իր ձանապարհը և շեռ գլորուում էր մեզնից ներքև զառիվայրով:

Շուտով հասանք լերան գագաթը և սեղանաբեկինք մեր ստանալան սեղան: Պէտք է ասել, որ այդ սարի վրայ ամեն մի գիւղ իր սեփական սեղան ունի, գիւղի ամեն մի ընտանիք էլ իր պատենական սեղան: Եթէ մի ընտանիք որևէ պարտաւորով չէ կարողանում մի վարդաւոր սուրբին աչցելել, նրա սեղանը դատարկ է մնում. շատ քիչ է պատահում, որ բանն աչցուի սեղանը, այն էլ քաղաքից եկած որևէ ընտանիք. աչցուի դատարկ մնացած սեղանը հազար գիւր կն լինում:

Մերոնք բոլորը գնացին շուտ անելու, իսկ ես, Սոկրատը և Սիրանոյշը գնացինք սարի վրայ ման գալու, ծաղիկներ քաղելու: Մի ծառայ մնացել էր պահպան, միւս երկուսը գնացել էին խոր կորելու ձիերի համար:

Երբ վերադարձանք զբոսանքից, մերոնք արդէն բոլորել էին սիրտի շուրջը, նախաձառում էին:

—Ա՛խ, Աշը-Ալեքսանն աչստեղ լինէր, Գէորգ, դարձաւ օրիորդի հայրը իմ հօրս. էլ մեր քէֆին քէֆ չէր հասնիլ:

—Աշը-Ալեքսանը թուրքերումն է հիմի, աչստեղ նա չի երևալ:

—Ի՞նչ կ'ուրք, եթէ ձեզ մի բարի լուր հաղորդեմ, ասաց մի առողջ երիտասարդ մեր հարեան վրանից:

—Չէ՛, ի՞նչ կայ:

—Աշը-Ալեքսանը եկել է, թուրքերի վրաններումն է, շուտով կ'արձրանայ սարը:

Աշը-Ալեքսանը մեր ամենաչափունի երգիչն էր: Եւ արժանի իր համբաւին. ես լսել եմ Վովկասի ամենաչափունի բոլոր ասիական երգիչներին՝ իբրև երգեցողութեան սիրահար, բայց բոլորը ոչինչ են թւացել Ալեքսանի առաջ: Նրա ձայնը ուժգնութիւն չունի, բայց խաղերը, մեղմիկ զեղգեղանքը, թանձրութիւնը հասած են աներևակայելի կայարելութեան: Նա երգում է ոչ թէ իբրև արհեստավար, այլ իր սրտի ու հոգու խորքերիցն է երգում, իր ցաւերն է լալիս: Նա բնականից կրքոտ և զգայուն լինելով, աւելա-

ցրել էր այդ հոգեկան յատկութիւններին և՛ խորին վիշտն այն օրից, երբ հողին էր յանձնել իր միակ հասած որդուն: Այդ ժամանակ նա արդէն երկրորդ երիտասարդութեան շէմքը ուր կոխած արամարդ էր, բայց նրա կորովի ձայնի ելևէջները, որ զգացմունքների մի-մի հրաշալի հիւսք էին, քանի զնում, այնքան աւելի էին շառնում ազդու, շուրեկան, թունաւորող, այրող: Սակաւ չէ պատահել, որ ես լացել եմ նրա սիզմահը լսելուց, կամ ապշել նրա ձայնի հարստութեան վրայ, երբ նա երգել է ռասսա, սխտիով ամեցածը նորայից, բարձրացնելով անասելի աստիճանի և էլի մեղմացնելով, հալցնելով, ցածրացնելով մինչև դեպի: Հրանք է, հրանք...

Քէ ինչ ուրախութիւններ է անում խաչ եկած հազարաւոր ժողովուրդը, այդ արժէ փեսնել: Այս կողմում զուռնաների զիլ ձայնը որոտեցնում է ժէռ ու քարերը, այն կողմում մի երիտասարդ մահուդ շուխալի թեքերը ծալած՝ վառած խփում է թառի լարերին, իսկ պճնւած հարսը ամօթխածութեան ժպիտը բերանին, սպիտակ թաշկինակը ձեռին նազ թիզ, սազ ու բազ անելով սարում է հանդարտ, իսկ շուրջը ծափահարում են ամենայն եռանդով, սարը թնդեցնում: Մի ուրիշ անկիւնում մէկը սազը շոշին քրած՝ զլխաբաց կրակ կորել, մի սը փափախը ձեռին կլկլացնում է շիքնաստան. մէկը փողն է լարում և սկսում ուզունդարան, միւսը մի «ան» անելով թռչում է փեղից, ծուլ-ծուլ անելով, կտանալով, ցածրանալով, բարձրանալով կաքաւում: Մի ուրիշ փեղ հեռու գիւղերից մի քանի ազգական-բարեկամ կանայք են նստել, քարէ քարէի են փալիս, խօսում, ծիծաղում, լալիս ու հրձում: Ո՞րն ասեմ, ո՞րը թողնեմ:

Մենք ևս քէ՛՛ քաշելու նպատակով էինք եկած, պէտք է որ միւսներին նմանէինք: Ալեքսանն ու Մանասը, որ իրիկնադէմին վրայ հասան, մեր քէ՛՛ին քէ՛՛ փեղն: Շուտով ահագին ժողովուրդ հաւաքեց մեր շուրջը: Ժողովրդի միջից խրախուսական, շնորհակալական բացականչութիւններ էին հն, որ թափւում էին Ալեքսանի հասցէին և աւելի վառում նրան:

— Ալեքսան, մի բայթի վերցրու, խնդրեցին:

— Զէ, եղբայր, ուրախութիւն խանդարելը լաւ բան չէ, Դեռ

նոր ենք սկսում. վաղը ճանապարհին կ'ասեմ, պատասխանեց Ալեքսանը, որ առանց բայաթիի էլ լացացնում էր:

Բայց ժողովուրդն սկսեց խնդրել, պահանջել, որ նա մի բայաթի կանչէ. էլ չ'կարողացաւ Դիմադրել, բոլորի Դէմ գնալ, սկսեց Բոլորը լարել էին, սիրտները թնդում էին, բոլորն էլ պատրաստուում էին հիանալու, թախծելու, արտասուելու, խնդալու: Եւ անսկսեց՝ սարսուռ ազդելով ամենքի վրայ. յետոյ աննկատելի կերպով անցաւ մի փող, երկրորդ փողի միջից բոլորն արդէն կախարդւել էին, արդէն շրուխները կախել էին, խոնարհւել, երեսները շառագունել, խեղճացել. իսկ երբ վերջին երկու փողը կրկնեց և վերջացրեց մի մեռնողի խաղով, կարծես քարացան ամենքը, միայն թեթեւ հառաչանքներ էին, որ լսում էին գլխի թեթեւ օրորոցի հետ: Լռեց Ալեքսանը, ինքն էլ գլուխը քաշ գցեց, այդպէս մի րոպէ փրկեց ընդհանուր լուռութիւն. յետոյ սկսեցին մէկ-մէկ գլուխները բարձրացնել, հառաչել, նայել Ալեքսանի Դէմքին ապուշ ժրջփ փով և հիանալ. բայց ոչ ոք չէր կարողանում արտայայտել իր հայեացքը, որպէս ցանկանում էր:

— Պահ, պահ, աշամորդի չէ անիծւածը, մեզ սպանեց, մեզ կոտորեց, հողիներս առաւ. սարանայի ձուկը, շան որդին, լսում էին ամեն կողմից:

— Ա՛ Մանաս, մի ուրախ պար ածա, Դու էլ ի՞նչ ես քիթ ու մուռթ Կախել, Դարձաւ Ալեքսանն իր եղբօրը:

Մանասը ոչինչ չ'աժեց, բայց քեամանչա՛ն ածողը Դիդիլ-խան նւագեց, որը կայանում է նրանում, որ ոչ թէ իսկապէս նւագում է, այլ խօսեցնում է քեամանչային (Դիդիլ-խանին), զանազան հարցեր է փալիս նւագողը, քեամանչան պատասխանում է. յետոյ քեամանչան նւագողից լսելով՝ որ իր ծնողները մեռել են, սկսում է ողբալ. ապա նւագողը քեամանչային յայտնում է, որ խաբել է, ծնողները կենդանի են, քեամանչան սկսում է ուրախութիւն անել, պարել, նւագողի ծնկան վրայ և Դիլ-Դիլ անել (պարի եղանակ նւագել):

Ամենքին ծիծաղ պատճառեց այդ կապակախաղը, ուրախութիւնը կրկին վերականգնւեց:

Հապա իմ Սիրանուշը:

Նա լռել էր. ու այնքան էլ ուրախ չէր երևում: Նստել էր կանանց մէջ, կծկել, շար քիչ էր ժպտում. մանաւանդ երբ արեւը մայր մտաւ, ցուրտն ընկաւ: Սիրանոյշի գոյնը թռաւ, շողում էր ցրտից, մտաւ շորերի տակ և այդպէս մնաց մինչև առաւօտ: Ինչպէս երևում էր նրա տհաճ շէմքից, շար էլ դո՛հ չէր լսալ զալուց, նա չէր կարողանում ընդհանուր ուրախութեանը մասնակից լինել: Նա օտար էր այդտեղ:

### III

Առաւօտեան լուսածագին բոլորս ուրի վրայ էինք, միայն երեսաներն ու Սիրանոյշն էին քնած. նա էլ էր երեսնայ հոգով. նրա երեսը բացել էր, հովը փչում էր ալ-վարդ երեսին, ճակատի վրայ ընկած խոպոպիկները ետ մղում, բաց էլի դալիս՝ յամառութեամբ նստում էին իրանց տեղը: Մի, ինչքան գեղեցիկ էր նա, ինչքան գրաւիչ. ո՞վ չէր ցանկանալ նրա տէրը լինել, նրա ընկերը, նրան իրը անւանել:

Մերոնք զնացին մի վերջին անգամ ուխտ անելու, Սոկրատը նոյնպէս, մնացի ես քնածների մօտ: Նացում էի Սիրանոյշին, նացում այդ հանգստացող շիցուհուն և չէի կշտանում: Երվներանդ արշալոյսը միացել էր նրա շէմքի հետ, վառել, մի կախարչական փայլ էր տալիս: Ես նախանձում էի արշալուսին, թէ ինչո՞ւ ես էլ չեմ կարող զարդարել սիրած էակս, ինչպէս նա:

Վերջապէս աչքս դարձրի սարը փաթաթած ամպերի ճովին, որ մեզնից ներքև ալեկոծւում էր, շէպի վեր սողում, ժայռին փաթաթւում որպէս ապարոշ: Սողալով, սողալով եկաւ մեզ պատեց մառախուղը, մինչև որ մերոնք եկան. Սիրանոյշն ու երեսաները վեր կացան սառստալով ցրտից, երես լւանալուց էլ հրաժարեցին ցրտի պատճառով. ձիերի կապից բռնած իջանք շէպի ցած: Սարը համարեա շարտարկ էր, բոլորը ցած էին իջել, մենք վերջիններից էինք:

Մի ժամից հասանք սարի ստորոտում գորնուղ աղբիւրին, որի ջրից յուլիսեան ամենասաստիկ տապի ժամանակ անգամ չէ կարելի կէս բաժակ խմել՝ այնքան սառն է: Այդտեղ լացեցին ովքեր չէին լւացուել, հեծանք ձիերը, և ես ու Սոկրատն առաջ անցանք մերձակայ անտառում յարմար տեղ պատրաստելու մերոնց համար: Մա-

ձիուէ գլուխը շիրմամբ պահեցիր. ասաց օրհորդը, երբ ես հաւասարեցի նրան:

— Ես ինձ աւելի բախտաւոր կ'համարէի, եթէ, ասէիր՝ «ինչ գրաւիչ պղաչ ես, և ոչ թէ բարի. ասացի ես իսկոյն զղջալով ասածիս համար:

— Ուզում ես, որ գրաւիչ էլ անւանեմ քեզ. բայց, դիտես, գրաւիչներին սիրում են:

— Է՛, միթէ ես անարժան եմ սիրոյ. անարար, սրտազին սիրոյ:

— Դ՞ն... Տէր Ասուած. ո՞վ ասաց քեզ այդ բանը. կակազեց նա ու հայեացքը գցեց ցած:

— Երևում է...

— Ո՛չ, չի երևում, Դու գրաւիչ էլ ես, զեղեցիկ էլ, հողիդ էլ գեղեցիկ. ես չեմ մոռնալ այն, ինչ որ Դու երեկ արիր ինձ համար. Ուզում ես ապացոյց...

Եւ նա յանկարծ կռանալով թամբի վրայ վաթաթւեց վիզս համբուրեց ինձ. նոյն արագութեամբ քաշեց ու առաջ խոցացաւ:

Մի համբոյր... Ի՛նչ է մի համբոյրը. բայց ես արբել էի այդ մի համբոյրից: Եուր հետեցի Սիրանոյշին, մինչև հաւասարեցի նրան: Նա ձին հանդարտեցրեց, ես նոյնպէս:

— Սիրանոյշ, եթէ այս համբոյրը լոկ երախտագիտական զգացմունքից բխեց, ես այնքան էլ ուրախ չեմ:

— Ո՛չ... ինչո՞ւ... անի մի՛ տանջիր ինձ... կարծես չես հասկանում...

— Սիրանոյշ...

...Քէֆ, քէֆ առաջներիս էր Դեռ, երեկոյեան ի՛նչ քէֆ էինք արել որ: Իմ սիրած անտառում մարմանդի վրայ տեղաւորել էինք, սփռոցը գցել, խոնջոյնքն սկսել: Գինին հոսում ակճորներից: Օ՛, չ'կարծէք թէ ես շար էի խմում, իսկի չէի էլ խմում, ես առանց այն էլ հարբած էի: Սիրանոյշը նստել էր քրոջս մօտ, շոյում, գուրգուրում էր նրան: Մէկ-մէկ էլ աչքի պակով նայում էր ինձ, ժպտում երջանիկ: Նա երեկւայ հակառակ մեծ ուշադրութեամբ էր լսում Ալեքսանի երգերը, և նրա Դէմքի վրայ արտայայտում էր փոթորիկոշ զգացուն հոգին:

Ո՞վ չէ փառք պւել սիրոյ պայծառ աստծուն իր սիրելի էս-

կին երջանկութիւն բաշխելու համար: Ես ինձ եօթերորդ երկն-  
քումն էի զգում՝ սիրածին բախտաւոր տեսնելով. ինձ թուում էր,  
թէ գլխաւորապէս ես էի նրա երջանկութեան պատճառը, և իհար-  
կէ ես էի:

Երբ իմ կենացն առաջարկեցին, Սիրանոյշի ծնողները կրկին  
շնորհակալութիւն յայտնեցին նախորդ օրւայ պատահարի համար.  
Ես ինձ հերոս զգացի. և հոգիս լցեց խնդութեամբ, երբ մանաւանդ  
Սիրանոյշը թողութիւն խնդրեց ծնողներից ինձ հետ բրտաբար  
խմելու. նրանք ազատութիւն տւին:

Փառաւոր ճաշը վերջացնելուց յետոյ հեծանք ձիերը, մերոնք  
ճանապարհը ծռեցին Դէպի մի ուրիշ ուխտատեղի... ճամբիւր, թիւ  
չկայ այդ անտառների, սարերի, ձորերի մէջ գտնուող ուխտատե-  
ղիներին: Ուր որ մի աստուծապաշտ ճգնաւոր է երևացել, այն  
տեղ ժողովորդը սրբացրել է, շատ անգամ հաստատարանոց արջերի  
որջերը ճգնաւորի խուցի տեղ ընդունելով:—Մերոնք ճանապարհները  
ծռեցին Դէպի մի ուրիշ ուխտատեղի, ի միջի այլոց և՛ Սիրանոյշն  
ու Սոկրատը՝ երեսաներին իմ խնամապարութեանը յանձնելով: Մի  
այնպիսի ուրախութիւնից յետոյ Դայեակի Դեր ստանձնելը շատ ան-  
շնորհակալ պաշտօն է ջահէլի համար, բայց ինչ կարող էի անել:  
Եւ իմ փոքրիկ կարաւանը սկսեց առաջ ընթանալ կրիայի քայլե-  
րով. մինչև որ մի ժամից յետոյ մերոնք եկան, ես ու Սոկրատը  
թողինք նրանց և առաջ անցանք. ջահէլը համբերութիւն չունի  
ձերի քայլովը քայլելու: Օրւայ ուրախութիւնը կատարեալ անելու  
համար ես երկու օր առաջ պատւիրել էի Խաչատրին՝ որ տանն էր  
մնացել, ձուկ որսալ և սպասել մեր գալուն: Մենք շրապեցինք  
պարտաստութիւն տեսնելու գործարանում: Խաչատուրն ահագին քա-  
նակութեամբ ձուկ էր բռնել նորից, թափել այգում աւազանի  
ափին, փորները ճշում էր ու լւանում:

—Աֆֆէրին, Խաչատուր, կանչեցի ես ձիու վրայից: Նա նա-  
յեց ինձ և տխրեց, որ արդէն Դարձել ենք:

—Իսկ ես յոյս ունէի, որ կ'հասցնեմ ձեր գալտին. բայց Դուք  
վերաԴարձել էք, իսկ ես նոր եմ սկսում մաքրել, ասաց Խաչատուրն  
ախոտալով, որ չ'կարողացաւ ցանկալի փախուցութիւնը գործել:

—Ոչինչ, միայն երկու հոգի ենք եկել, մերոնք հազիւ երկու ժամից երևան, միամտացրի ես:

—Հն, շէ լաւ է, լաւ է:

Տւի հարկաւոր պատւէրները. և Սոկրատի հետ միասին անցանք շէպի գետը՝ լողանալու:

#### IV

Միւս օրը խօսակցութիւն ունեցայ Սիրանոյշի հետ... մեր ամուսնութեան մասին...

—Սիրանոյշ, ասացի ես՝ ոչ առանց ներքին շողի. կարիք չ'կայ էլ երկար բարակ խօսքերի. մեր սրտերն իրար լիովին հասկանում են, մնում է մեզ միայն մի բանի մասին խօսել լրջօրէն...

—Հասկանում եմ, ընդհատեց Սիրանոյշը, թէ ինչի մասին է խօսքդ:

—Հապա՛ ինչի՛:

—Ձէ շուր ասա փեսնեմ:

—Ես ուզում էի խօսել մեր... ամուսնութեան մասին:

—Լա՛ւ:

—Դու ի հարկէ՛ համաձայն ես ինձ հետ ամուսնանալու:

—Ես ոչոքի չեմ սիրել, բացի քեզնից, հետեւապէս և ոչոքի հետ չեմ ամուսնանալ, բացի քեզնից: Բայց...

—Բայց ի՞նչ...

—Բայց շուր շեռ ուսանող ես:

—Ե՛, ի՞նչ նշանակութիւն ունի:

—Ո՛չ, այդպէս թեթեւ աչքով չ'պէտք է նայել. շուր ամուսնանալով՝ ինձ այստեղ չես թողնիլ, ինքդ գնալ:

—Ի հարկէ՛ ո՛չ:

—Իսկ քեզ հետ գալով ես ծանր բեռ կ'դառնամ քեզ համար:

—Ինչո՞ւ:

—Ես կ'խանգարեմ քեզ. չես կարող պարապել:

Ես մտածեցի և փեսայ, որ միանգամայն արդարացի է Սիրանոյշի առարկութիւնը:

—Հապա ի՞նչ անենք, շարձայ ես:

—Նշանակել ու գնալ. ես շեռ փասնութ փարեկան եմ, շուր

քսան. այս հասակում մինչև անգամ ծիծաղ կարող է պատճառել շարերին, փարթրինակ կարող է թլալ ամուսնանալու միտքը. Դեռ կարող ենք համբերել մի երեք-չորս տարի:

Ուրիշ էլք չունէի, սրիպւած պէտք է համաձայնէի. բայց նշանուել, անպատճառ. նշանուել, այդ անհրաժեշտ էի համարում սիրեցեալիս նոր-նոր փեսաներից ապահովելու համար, որովհետև չ'նշանուած աղջիկը մեր աշխարհում մի խորթ մայր ունեցող վառիկ է, ցինը կ'գաջ կ'ցափշտակէ, ինքդ էլ չես իմանալ, թէ ինչպէս մայրը իր ճանկերով նրան ցինին յանձնեց:

Պէտք էր խօսել ծնողներիս հետ, նոյնպէս և առնել Սիրանոյշի ծնողների համաձայնութիւնը: Մտածեցի Դիմեմ մօրս. ես մօրիցս չէի քաշուում, և վտարս էի, որ ինձ կ'օգնէ, ու հօրս կը պատրաստէ: Եւ... Եւ ինչ երտաղներ, ինչ ճրագիրներ...

Բայց վերջը:

Վերջը. ինչ վերջ էք ուզում: Վերջը շատ պարզ: Սիրանոյշը հիմի քաշաքում շատ հարուստ վաճառականներից մէկի կ'ինն է. ու դարնանը ծնաւ իր չորրորդ երեխան:

Իսկ ես: Ե', ձեզ ինչ իմ կեանքը. ձեզ խոստացայ միայն մի քեկոր իմ կեանքիցս: